Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ք.Երևան

15.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Ա. Մելիքսեթյանի
Հ. Մանուկյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Տ

Բողոքարկվել է տարբերակ 9-ի նյութական իրավունքի բաժնի 31"61-րդ, 7"13-րդ, 22"42-րդ, 29"55-րդ, 23"43-րդ, 4.9-րդ հարցերը:

61-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, քանզի սխալ են մեկնաբանվել տարածության մեջ քրեական օրենքի գործողության դրույթները, արդարացված չէ նաև ՄԻԵԿ-ի վերաբերյալ հղում կատարելը, քանզի այն չի արտացոլում ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ մասում ներկայացված պահանջը, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

13-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի փաստարկումը չի բխում խնդրում ներկայացված փաստերի իրավական վերլուծությունից, ներկայացված տարբերակում առկա է հանցագործությունների համակցություն, քանի որ խնդրի պայմաններից երևում է, որ Թ-ի կողմից առկա է նաև հրազենը պահելու դիտավորություն*, ուստի գնահատականը չի բարձրացվում:

42-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ՀՀ քրեական օրենսդրության նորմերի սխալ մեկնաբանության արդյունք են, քանզի ներկայացված հիմնավորումը ընդունելի չէ, քանզի առկա է ճիշտ պատասխան, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

55-րդ հարցի *վերաբերյալ թեև հավակնորդի հիմնավորումներն առ այն, որ առկա է չհաջողված հանցակցության երկու տեսակ, ընդունելի է: Սակայն, հաշվի առնելով, որ ընտրված տարբերակը, մեջբերված իրավադրույթները և եզրահանգումները չեն համապատասխանում միմյանց, հետևաբար գնահատականը չի բարձրացվում:*

43-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ՀՀ քրեական օրենսդրության նորմերի սխալ մեկնաբանության արդյունք են, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված մեկնաբանությունների լույսի ներքո բնակարան մուտք գործելը եղել է անձի կամքին հակառակ, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

9-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի են, քանզի բխում են հատուկ սուբյեկտով արարքի որակման կանոններից, ուստի հավակնորդին տրվում է 1 միավոր:*

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ***3127*** ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակիորեն, նյութական իրավունքից ստացված 23 միավորը բարձրացնել 1 միավորով՝ արդյունքում արձանագրել 24 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ